ՈՐԹԵՐԻ ՄԻ ՆՈՐ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Այս վերնագրով մի յօդուած ինձ պատահել էր, դեռ անցեալ տարի, ֆրանսիական Journal des cultivateurs օրագրում, բայց մինչև այժմ այդ մասին, կարծեմ, ոչ մի տեղեկութիւն չը հաղորդվեցաւ մեր պարբերական թերթերի մէջ. Այժմ որ հասարակութեան ուշադրութիւնը լարված է Ռուսաստանումն էլ, Խրիմում, յայտնված ֆիլօկսերայով, որը, ինչպէս երևում է գիւղատնտես պ. Խօջայեվի „Кавказъ" լրագրին յայտնած տեղեկութիւնից՝ արդէն Սուխումի մօտերքումն էլ է յայտնվել,— աւելորդ չեմ համարում խաղողի այդ նոր հիւանդութեան համար համառօտ տեղեկութիւն հաղորդել „Մշակի" ընթերցողներին՝ յիշեալ յօդուածից քաղելով:

Այդ հիւանդութիւնը պատճառվում է մի տեսակ սունկից, որը խիստ վնասակար է որթերի մի քանի յայտնի տեսակների համար, մանաւանդ եւրոպական տեսակների. midew americain ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ մի սունկ: Դա է peronospora viticola, միևնոյն ընտանիքից, որից է peronospora infestans, որը երկար տարիներով այնքան վնաս հասցրեց գետնախնձորին: Նա միշտ ծնունդ է առնում որթի տերևների ներքևի երեսի վերա, կամ իրեն արտայայտում է երբեմն կանոնաւոր, երբեմն անկանոն սպիտակ թափանցիկ բծերով: 1880 թուականի յուլիսի 25-ից նա նկատվել է jacquez տեսակի որթերի տերևների տակ, նա երևացել է Ներաքի շրջակայքում ամերիկական տունկերի վրա: Նախընթաց տարում նորան նկատել էին Բուրգօնիայում, Ֆրանսիայի հարաւային սահմանում: Ամերիկական տունկերի վրա նա աւելի կանոնաւոր ձևով է լինում, իսկ ֆրանսիականների վերա շատ ցրված է լինում և տերևի ներքևի երեսը ծածկում է անկանոն գծագրութիւններով: Թէ այսպէս և թէ այնպէս նորա ներգործութիւնը միևնոյն է. տերևը սկսում է չորանալ, վայր է ընկնում և որթը իւր խաղողի ողկոյզներով մնում է համարեա՛ մերկ, յառաջ քան թէ ողկոյզները կարող լինէին կատարելապէս հասունանալ:

Խոշորացուցական հետազօտութիւններով ապացուցվել է որ ամերիկական և ֆրանսիական տունկերի midew-ը կատարեալ միևնոյն են: Այդ սունկը մօտ ժամանակներումն է Ֆրանսիա բերած, թէ վաղուց նա եղել է,—այդ դեռ մի հարց է, որին յիշեալ օրագիրը դժուարանում է պատասխանել: Ինչ վերաբերում է նորա դէմ գործադրելի միջոցներին, ոչ կիրը, ոչ ծծումբը, ոչ մոխիրները չեն կարողանում հիւանդութիւնը վերջացնել, միայն պղնձային ծծմբաթթու աղն (sulfate de cuivre) է բաւականին աչօղ արդասիք ցոյց տուել:

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Մայիսի 30

1879 թուականի վերջերից մեր հասարակութիւնը չորս անգամ դիմել է Գանձակի նահանգապետին խնդիրքով թոյլ տալու Շուշում հասարակական գրադարան բանալ, բայց այդ խնդիրքը անկատար մնաց. վերջը տեղւոյս քաղաքային դպրոցի ուսուցիչ պ. Ջէզգինիզէն, ինքը անձամբ գնալով Գանձակ, նահանգապետից թոյլտուութիւն է ստացել մասնաւոր գրադարան բանալու, որը արդէն բացված է ու բաւականին հարուստ է թէ հայերէն, թէ ռուսերէն ընտիր գրքերով և թէ գրատան ու մի քանի նուիրատու անձանց անունով ստացվող պարբերական հրատարակութիւններով: Բայց չը նայելով որ մեր բաժանորդները մեծ ուրախութեամբ էին վճարում տարեկան բաժանորդագրութեան տասն րուբլին, այնու ամենայնիւ սոցա մեծ մասը դեռ գրադարանի մուտքը չեն ճանաչում ու դրա վրա նայում են միայն հրապարակի վերի ծայրից:

Գրադարանը ստանում է հետևեալ լրագրերը ու ամսագրերը՝ «Մշակ», «Մեղու», «Մասիս», «Փորձ», «Արարատ», «Փարոս Հայաստանի», «Кавказъ», «Голосъ», «Порядокъ», «Новости», «Русскій Курьеръ», «Фаланга», «Слово», «Отечественные Записки», «Вѣстникъ Европы», «Природа и Охота», «Живописное Обозрѣніе», «Свѣтъ и Тѣни», «Юридическое Обозрѣніе», «Le Temps» և երեք վրաց հրատարակութիւններ:

Միքայէլ Տէր-Խաչատրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր բաժանորդներից մէկը, բնակվելով պօլիցիական 6-րդ բաժնի մէջ Տամօժեննայա փողոցի վրա, որ սուրբ Սարգսի եկեղեցուց էլ բաւական հեռու է, պատուիրել էր «Մշակի» ցրվողին իր համարները թողնել սուրբ Սարգսի եկեղեցու լուսարարի մօտ: Կօնսիստօրիայի նախանդամ Երևելի Մամբրէ վարդապետը, որ նոյն եկեղեցու գաւթումն է ապրում այժմ, պատուիրել է լուսարարին ոչ թէ միայն չընդունել մեր բաժանորդի համարը, այլ և չը թողնել, որ «Մշակ» ներս տանեն եկեղեցու գաւիթը: Այդ կարգադրութիւնը արված է «Մշակի» մէջ Մամբրէ վարդապետի մասին յօդուածների տպվելուց յետոյ: Այս փաստից մեր ընթերցողները կարող են գաղափար կազմել Մամբրէ վարդապետի մասին:

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են: «Հոգևոր դպրանոցի դրութիւնը շատ վատ է. երկպառակութիւնները կատարելապէս տիրած են Կարապետ վարդապետի անհոգութեան, իսկ գուցէ գաղտնի չար նըպատակների պատճառով: Դպրանոցի տեսուչ Ս. Մանդինեան, որ այս տարի հոգևոր դպրանոցում մեծ աշխատութիւն ցոյց տուեց, դժբաղդաբար Թիֆլիս է գնում: Դպրանոցի այժմեան անմխիթար վիճակը յոյս չէ տալիս մեզ որ այդ փորձառու տեսուչը մեզ մօտ մնայ:»

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ հաղորդում են: «Նշանաւոր հարուստ Կրասիլնիկեանները մտադիր են ընկերութեամբ Շուշու ժայռի ստորոտից մինչև Գանձակ երկաթուղու գիծ տանել: Այդ լսելով քաղաքը ուրախացած է և անչափ մեծ յոյս ունի որ այդ գեղեցիկ դիտաւորութիւնը իրագործվի:»

—

ԻԳԴԻՐԻՑ պ. Մկրտիչ Զաքարեանց խնդրում է մեզ յայտնել որ նա ձեռնարկել է թարգմանել Լըգուվէ ֆրանսիացի յայտնի հեղինակի գործը «Մանկանց դաստիարակութեան վրա» (О воспитаніи дѣтей) որ բաղկացած է երկու հատորներից. «Дѣтство» և «Юношество»: Առաջի թարգմանութիւնը պարոնը արդէն վերջացրել է և շուտով կը սկսի երկրորդի թարգմանութիւնը:

—

Իգդիրից մեզ գրում են որ այստեղ կազմվել է թատրօնասէրների մի խումբ, որ մտադիր է ներկայացումներ տալ բարեգործական նպատակով:

—

Այն ժամանակից երբ սկսել է տպվել «Մշակի» մէջ Գրիգոր Արծրունու ռուսերէն բրօշիւրի մասին յայտարարութիւնը, ամեն կողմից սկսեցին պահանջել այդ բրօշիւրը: Այժմ խմբագրութեան մէջ շատ չէ մնացել այդ գրքոյկից, բայց դարձեալ առնել ցանկացողներ շատ կան, որոնք դիմում են մեզ նամակով: Այդ բրօշիւրը «Экономическое положеніе армянъ въ Турціи» տպվել է Մօսկվայում հեղինակի հաշւով և այնտեղ ու Ս. Պետերբուրգում ուսանողների ձեռքով ծախվում էր յօգուտ չքաւոր ուսանողների: Հետաքրքիր է իմանալ ում ձեռքումն է այդ բրօշիւրը, արդեօք ամբողջութեամբ ծախվել է, թէ դարձեալ կայ: Եթէ դա յօգուտ ուսանողների էր ծախվում, ինչքան գոյացաւ գումար: Եւ այժմ շատ ցանկացողներ կան գնելու այդ բրօշիւրը, ուրեմն լաւ կը լինէր որ ուսանողները յայտնէին թէ որտեղ է ծախվում և ում կարելի է դիմել առնելու համար: Իսկ այն օրինակները, որոնք ծախվում էին «Մշակի» խմբագրութեան մէջ, դրանք յօգուտ ուսանողների չէին ծախվում, այլ ուղարկվեցան մեզ փոխարէն այն 100 րուբլի գումարի, որ մենք ծախսեցինք բրօշիւրի տպագրութեան համար:

—

«Кавказъ» լրագրին գրում են որ Սուխումի շրջականերում արդէն յայտնվել է խաղողի որթերի թշնամի ֆիլօկսերա սունկը: Ուսումնական երկրագործ պ. Խօջայեան արդէն հետազօտել է այդ տեղերը և ստուգում է ֆիլօկսերայի երևալը:

Վարժարան	2
Աշակերտ	81

Այս գաւառը կարող է 500 տուն գաղթական ընդունել:

13.

Արճկէ

Արճկէն (Ալջէվազ) Ախլաթու, Բուլանըխայ, Մանազկերտի և Արճէշի մէջ կընկնի Վանայ ծովու արևմտեան ափին, Վան քաղաքի հանդէպ. Վանից հեռի է ցամաքով 24 ժամ, իսկ ծովով 4 ժամ: Գաւառագլուխն է Արճկէ, զարդարված պտղատու ծառաստաններով: Առատ և վճիտ են սրա ջրերը. գիւղը լեռնային է, միայն ծովափնեայքն են հարթ: Սըփան—Մասիք մշտաձիւն մեծ և գեղեցիկ լեռը կանգնած է Արճկէի գլխին, տարածելով իր թևերը Արճշու, Բուլանըխայ և Մանազկերտի սահմանների վրա: Արճկէից բարձր Սըփանայ աջ թևին տակ, սկաւառակաձև մի հովիտ կայ Սուլթէն անուն, որ աւազան է մշտաբուղխ ջրերի: Դա մի անսպառ արօտատեղի է: Օդը բարեխառն է, ցորեանն և խոտ առատ են:

Գիւղերի թիւ	98
Հայերի թիւ	15,615
Թիւրքեր	3675
Ջէրքէզ	780

Քիւրդ ցեղերից հասնանցիք և հայտարանցիք թափառում են այս գաւառում:

Վարժարաններ	4
Աշակերտներ	135
Վանք	3

Որոց մէջ նշանաւոր է Սքանչելագործայ վանքը: Այս գաւառը իր ծոցում կարող է 800 ընտանիք գաղթական ընդունել:

14.

Արճէշ

Արճէշ (Քաջբերունիք) հեռու է Վանէն ցամաքից 18 ժամ, ծովից 2 ժամ. Արճկէի, Մանազկերտի, Ալաշկերտի և Բերկրուց մէջ կընկնի: Հարաւարևելեան մասը ծովափնեայ են: Գաւառագլուխն է Ականց, օդը բարեխառն է, ջուրն առատ, հողն առաջին կարգի պտղաւէտ: Ցորեանը, ձին, ոչխար, արջառն անուանի են: Արճիշում և Արճկէում սատին արտեր ցանելու մի առանձին եղանակ ունին, որ շատ ապահով է երաշտութեան դէմ և արգիլներից: Արտը վարելուց զկնի, ցանելու ժամանակ, նրանք արօրով կրկին անգամ ակօսներով գծում են բոլոր արտը. արօրի խոր տախտակեայ մի խողովակ է հաստատված, որի միջնորդութեամբ ցորենի հատիկներ կը թափին կարգաւ միայն ակօսների մէջ: Բնական է որ ակօսի երկու կողմի թմբերը միշտ կարող են խոնաւութիւն պահպանել և առատ մնունդ տալ ցանքին: Այս տեսակ մշակված արտեր Տիր են կոչվում, որոնց ցորեանի հատիկները պարարտ և խոշոր կը լինեն: Վարուցանքի այդ եղանակը շատ հին պիտի լինի և բարեբաղդաբար հետզհետէ տարածվում է շրջակայ գաւառների մէջ:

1878 թուականին, երբ բոլոր Վասպուրականի արտերը երաշտով ոչնչացան, արճէշցիք և արճկեցիք, շնորհիւ իրանց ցանելու եղանակին, առատ հունձ ունեցան: 1879 և 1880 թ. երբ սովը չորս կողմ կոտորած էր անում, յիշեալ երկու գաւառները չարունակ երեք տարի ցորեան ծախեցին և հարստացան:

Երկու գետ ունի գաւառս, Օրօրան և Արճէշ:

Զիլանայ ձորում կան ծծմբային ջերմուկներ, ուր նշմարվում է հին մարմարեայ աւազանների նշխարներ: Զիլանայ ձորում կան նաև պղնձի հանքեր:

Բոլոր գաւառին տիրում է Ծաղկոց լեռը (Ալատաղ) որ ոտից գլուխ զարդարված է ծաղկալից պարարտ արօտով: Այս լեռան մէջ կան շատ քարայրներ և հնութեանց բեկորներ, և մի լայնարձակ ճանապարհի հետքեր. ունի պղնձի հանքեր:

Առնիս գիւղի և Ականց մէջ, ճանապարհի եզերքին, ժայռերի վրա, 5—6 կտոր բևեռագրեր կան փորած: Այս քարերը անուանվում են օձաքարեր, որի վրա զանազան առասպելներ են պատմում: Նոյն ժայռերի մի ծերպի մէջ, երկու քարի արանքում, 4—5 թիզ երկայնութեամբ և ճիշդ մատի հաստութեամբ մօղէսների նման կենդանիներ կան իրար փաթթված, սև և սպիտակ գոյներ օղակ օղակ պատում են կենդանու մարմինը: Շատ աշխատեցայ այս կենդանիներից մէկը դուրս հանել, բայց անկարելի եղաւ: Տեղացիք դրանց օձ են անուանում և պատմում են որ ամառ ձմեռ այդ քարի արանքից դուրս չեն գալիս:

Ականից հիւսիսային արևմտեան կողմը երկու վերստ հեռաւորութեամբ երևում է մի սպիտակ բլրակ—դա Խրիշատի բերդի աւերակներն են: Շինութեանց հիմունքը սպիտակ քարերից լինելով, բոլոր քաղաքի յատակագիծը յայտնի որոշ երևում է՝ միջափողոցներ, հրապարակներ, մինչև անգամ տան բակ և սենեակներ: Փողոցները ուղիղ և միաչափ ձևած են, քաղաքը բաժանված է բազմաթիւ թաղերի: Ամեն մի թաղում մի քանի մեծ փողոցներ կան, որոնք զուգահեռաբար թաղի մի ծայրից միւսն են անցնում. միջափողոցները երկու կողմից ուղիղ խաչաձև կտրում են մեծ փողոցները. նրանց միմեանց մէջ ունեցած լայնութիւնը և երկայնութիւնը միաչափ են նոյնպէս և մեծ փողոցներին և թաղերին: Թիւրքերի կասկածը և հետաքրքրութիւնը չը գրգռելու համար, ես իրիկնապահին գնացի այդ աւերակները տեսնելու, կէս ժամ միայն լոյս ունենալով ինձ հետ, ուստի հազիւ կարողացայ մի թաղի փողոցների և միջոցների լայնութիւնը չափել և միւս թաղի հետ համեմատել: Գլխաւոր փողոցները 25 ֆուտ լայնութիւն ունին, միջափողոցները 16. միջափողոցների միմեանց մէջ ունեցած զուգահեռական տարածութեան երկայնութիւնը 140 ֆուտ է, լայնութիւնը 115. Հայկական աւերակների մէջ առաջին անգամն էի տեսնում ես մի այսպիսի կանոնաւոր յատակագիծ ունեցող բերդաքաղաք, որի համար մեր պատմութեան մէջ ոչինչ չէ յիշատակված:

Գիւղերի թիւ	152
Հայերի թիւ	26,897
Թիւրքեր	2904
Քիւրդեր (հայտարանցոց աշիրաթի մի մաս)	4000

Սոքա բնակվում են Ալատաղում:

Վանքեր	4

Որոց մէջ նշանաւոր է Մեծոփայ վանքը

Եկեղեցիներ	24
Վարժարան	3
Աշակերտներ	111

Կարող է 1500 տուն գաղթական ընդունել:

Վերջ Վասպուրական նահանգի:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

15.

Բուլանըխ և Մանազկերտ

Վանայ ծովի արևմտեան գաւառաց ուղղութեամբ, այսինքն Ախլաթու, Արճկէու և Արճիշոյ արևմտեան կողմը կը տարածվի վերին և ներքին Բուլանըխներ և Մանազկերտ: Այս երեք գաւառները միանման դիրք ունին. հարաւէն նրանց սահմանում է Մշոյ դաշտը, արևմուտքէն Խնուս, հիւսիսէն Ալաշկերտ: Այս սահմանները լեռանց գօտիներով բաժանվում են: Բուլանըխներ և Խընուս անջրպետող սարերը աղի լեռներ են, որտեղից առատութեամբ կարմիր և սպիտակ աղ կը հանվի, և աղի աղբիւրներ կը հոսեն: Բոլոր Տաճկահայաստանում այս գաւառաց, մանաւանդ Բուլանըխների հողի նման արգասաբեր և լաւ մշակված հողեր չը կան, բաց առած Մանազկերտէն դէպի Արճէշ տարածված ընդարձակ դաշտը, որ քարքարոտ է և ամայի: Դա Սփանայ լանջային հովիտ է և անուանվում է Մանազկերտի քօլայ:

Հասնանցի քրդերը բռնած են Մանազկերտի լա